

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Հետայսու երկու բան պիտի զբաղեցնեն հայր միտքը՝ Հայաստանը և իր ինքնապաշտպանությունը:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ



Ներքին Յանդը՝ Սյունիքի հարավ-արևելյան դարպասը, աբցանի մեջ է

Սյունիքի սահմանապահ գյուղերի վիճակը 2020 թ. դեկտեմբերի 18-ից հետո (մեղմ ասած) նման չէ մինչ այդ եղած կացությանը:

Փոփոխությունն ակնհայտորեն նկատելի է Ծավի ենթաշրջանում, և առաջին հերթին՝ անվտանգային համակարգի նոր, երբևէ չեղած նկարագրով: Ավելի կոնկրետ՝ Ծավի ամբողջ ենթաշրջանը՝ ճակատենից մինչև Շիկահող, մինչև Սրաշեն, ապա մինչև Ներքին Յանդ, կարծես, պաշտպանական մի կուռ համակարգ է այլևս: Այդ բնակավայրերից դեպի արևելք աղբյուրական հենակետեր են, նորաբաց կամ նոր կառուցվող ճանապարհներ, որոնք անգն աչքով անգամ տեսանելի են մայրուղուց: Ծավի ենթաշրջանում և ընդհանրապես ամբողջ Սյունիքում ռազմավարական առանձնահատուկ դիրք է զբաղեցնում Բասուտա գետի հովիտը, որի կենտրոնում Ներքին Յանդ գյուղն է՝ երեք կողմից աղբյուրական դիրքերի հայացքի ներքո...

Անկեղծ ասած՝ Սյունյաց աշխարհի բազում բնակավայրեր են հիմա Աղբյուրականի գիւղայնության դեմ հանդիման, բայց Ներքին Յանդը... Նեղ սեպի նման այն խրված է աղբյուրական դիրքերի մեջ: Գյուղն աբցանի մեջ հայտնվեց կամ գյուղի այդ վիճակը վերջնականապես ձևավորվեց 2022 թ. մարտի առաջին օրերին, երբ աղբյուրականի գիւղայնությունը (առանց դիմադրության հանդիպելու) բռնազավթեցին գյուղի հարավային՝ իշխող բարձունքներից մեկը, որ տեղացիները կոչում են ճղարանց արտեր կամ Շիկատեղի դիմացի բարձունք: Հայաստանում այդ օրերին բարձրացած արդարացի աղմուկը չխանգարեց, որ աղբյուրականից մոտ 700-800 մ երկարությամբ ճանապարհ բացեն (ոլորաններով) դեպի նորահար առաջնագիծ, որտեղ արդեն իսկ նրանց մարտական դիրքն էր՝ նախկինում երբևէ գոյություն չունեցած: Այդ բարձունքից, որ ի սկզբանե (ևսև

խորհրդային ժամանակներում) Ներքին Յանդի վարչական տարածքի մաս էր, ոչ միայն դիտարկվում են գյուղի գերեզմանը, հին գուղատեղին՝ Սուրբ Գևորգ եկեղեցիով, ևսև Շեկատեղի Սուրբ Զոհիսիմե սրբավայրը, այլև Ծավի ենթաշրջանի մեծ մասը... Ներքին Յանդի մերձակայքի օկուպացիայից հետո մեր կողմից եականորեն ուժեղացվել է հայկական պաշտպանական գիծը, ինչը, անշուշտ, դրվատանք է արժանի: Այդ առումով զննատելի է ևսև երկրապահ-կամավորականների վարքը, ովքեր Սասուն Միքայելյանի գլխավորությամբ հետևողականություն են ցուցաբերում... Տեղի բնակիչներին որոշ չափով հույս է ներշնչել ևսև Կապան-Ծավ մայրուղուց դեպի Ներքին Յանդ ձգվող ճանապարհի խաչմերուկում (մարտյան դեպքերից հետո) կարգված ռուսական հենակետ-անցակետը, թեև այնքան էլ հասկանալի չէ, թե ինչու հենակետը Ներքին Յանդում չի տեղակայվել կամ նրա ար-

Արցախը երբեք չի եղել ու չի լինելու Աղբյուրականի կազմում

Արցախը երբեք չի եղել ու չի լինելու Աղբյուրականի կազմում, և դրա շուրջ ցանկացած քննարկում մեզ համար անընդունելի է: Այս մասին ապրիլի 14-ին՝ ԱՀ ԱԺ արտահերթ նիստում ասաց ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմայանը:

«**Դ**ա կարմիր գիծն է, որը որևէ մեկն իրավունք չունի խախտել: Արցախի բռնակցումն Աղբյուրականի կրթի Արցախի ոչնչացման և կհանդիսանա աշխարհաբարդաբանական, պատմական և բարոյական ողբերգություն հայրց պետականության և հայ ժողովրդի համար: Արցախի ժողովուրդը հաստատակամ է և չի շեղվելու իր ընտրած ուղուց: Մենք չափազանց թանկ գին ենք վճարել մեր ազատության և անկախության համար: Եվ մեր պատմությունն անարժան ձևով փակելու բարոյական իրավունք չունենք», – ասաց նա:

Պահանջում ենք՝ Հայաստանի իշխանությունները հրաժարվեն իրենց աղետալի դիրքորոշումից

Արցախի ԱԺ-ն ընդունել է հայտարարություն, որում մասնավորապես նշվում է.

«Արցախի Հանրապետության ներկայիս իրավաբարդաբանական կարգավիճակը ձևավորվել է համաժողովրդական կամքի արտահայտությամբ 3 հանրաքվեների, դրանք արդյունքում ընդունված Սահմանադրության ազդեցությամբ և հայրության բոլոր հատվածների միջև նախընթաց տարիներին հաստատված համազգային համաձայնության ճանապարհով: Արցախահայրությունը բազմազգացրել է խաղաղության գիւղը: Արցախի պետականության և պատմական հայրենիքում ազատ ու անկախ ապրելու իրավունքը բացարձակ արժեքներ են, և դրանցից անգամ պատերազմի սպառնալիքը չի կարող մեզ հետ պահել: Հայաստան-Աղբյուրական չակերտավոր խաղաղության օրակարգով Արցախն Աղբյուրականի բռնակցելու ցանկացած բանակցային գործընթաց ինքնին, ինչպես ևսև դրանից բխող փաստաթղթի ստորագրումը տապալում է ոչ միայն Արցախի պետականությունը, այլև արցախահայրության իր պատմական հայրենիքում ապրելու անբակտելի իրավունքը: Պահանջում ենք, որ Հայաստանի իշխանությունները հրաժարվեն իրենց ներկայիս աղետալի դիրքորոշումից և առաջնորդվեն բացառապես այդ արժեքներով: Ոչ մի իշխանություն իրավունք չունի խաղաղության պատրվակով Արցախի համար անընդունելի կարգավիճակի, ինչպես ևսև միջազգայնորեն ճանաչված ինքնորոշման իրավունքի բանակցային նշանոց իջեցնելու: Արցախահայրության անունից դիմում ենք աշխարհասփյուռ հայրությանը՝ այս արդար պայքարում միասնաբար և վճռականորեն կանգնել Հայաստանի և Արցախի, մեր եղբայրների ու քույրերի կողքին: ՀՀ ԱԺ մեր գործընկերներին՝ չշեղվել ՀՀ գերագույն խորհրդի 1992 թվականի հուլիսի 8-ի որոշման ուղեգծից: ՌԴ ղեկավարությանը՝ մեզ համար խիստ կարևոր խաղաղապահ առաքելության ընթացքում առիթ չտալ որևէ մեկին՝ շահարկել ծագող խնդիրները, որպես Արցախի ժողովրդի հետագա անվտանգությունը հարցականի տակ դնելու հիմք: ԵԱԿՀ Միևսկի համանախագահ երկրներին՝ անկախ առկա այլ տարածաշրջաններին, ջանքեր գործադրել պահպանելու ԼՂ-ի հիմնախնդրի կարգավորման միակ միջազգային մեթոդն ունեցող ձևաչափ», – նշվում է հայտարարության մեջ:

Պուտինի ու Փաշինյանի համատեղ հայտարարությունը

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հանդես են եկել համատեղ հայտարարությամբ.

«Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Վ.Պուտինի իրավունքով՝ 2022 թվականի ապրիլի 19-20-ը Հայաստանի Հանրապետության վարչապետ Ն.Վ.Փաշինյանը պաշտոնական այց կատարեց Ռուսաստանի Դաշնություն: 1. Առաջնորդները, Հայաստանի և Ռուսաստանի դաշնակցային հարաբերություններին բնորոշ կառուցողական և վստահության մթնոլորտում անցկացրեցին մտքերի հանգամանակից փոխանակում բաղաբանական, ռազմական և ռազմատեխնիկական, առևտրատնտեսական, գիտակրթական,

մշակութային-հումանիտար ոլորտներում, ինչպես ևսև արդարադատության, աշխատանքի և սոցիալական հարցերի ոլորտներում երկկողմ համագործակցության ընդարձակ օրակարգի շուրջ, գոհունակությամբ նշեցին Հայաստանի և Ռուսաստանի միջև բազմաբնույթ փոխաշխատակցության դաշնակցության զարգացման դրական դինամիկան: Եսև քննարկվեցին տարածաշրջանային և միջազգային խնդիրների շուրջ փոխգործակցության՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող արդիական հարցեր: 2. Կողմերը, պատմական նշանակություն տալով պետությունների միջև 1992թ. ապրիլի 3-ին դիվանագիտական հարաբեր-



Պուտինի ու Փաշինյանի համատեղ հայտարարությունը

Սկզբը՝ էջ 1

րությունների հաստատման 30-ամյակին, հաստատեցին միջպետական հարաբերությունների համապարփակ խորացման և ընդլայնման մտադրությունը 1997թ. օգոստոսի 29-ի Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրում և 2000թ. սեպտեմբերի 26-ի Դեպի 21-րդ դար ուղղված Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև դաշնակցային փոխգործակցության հռչակագրում ամրագրված սկզբունքների հիման վրա: Համոզմունք հայտնեցին, որ հայ-ռուսաստանյան հարաբերությունների հետագա առաջանցիկ զարգացումը նպաստելու է Հայաստանի և Ռուսաստանի ժողովուրդների արմատական հետաքրքրությունների և ձգտումների իրագործմանը, տարածաշրջանային անվտանգության և կայության ամրապնդմանը, երկու երկրների միջազգային հեղինակության ամրապնդմանը:

3. Առաջնորդները համաձայնեցին, որ 2022թ. դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին առնչվող համատեղ միջոցառումների կազմակերպումը կծառայի երկրորդ փոխգործակցության առաջնությանը, դրա ռազմավարական ուղղվածության և առանձնաշնորհյալ բնույթի ամրագրմանը: Պայմանավորվեցին, հորեյանի կապակցությամբ անցկացնել Հայաստանի մշակույթի օրերը Ռուսաստանում, Ռուսաստանի հոգևոր մշակույթի օրերը Հայաստանում, հայ-ռուսաստանյան բարեկամության հուշարձանի հիմքի տեղադրումը Երևանում և մի շարք այլ միջոցառումներ, որոնք կտեսնենք մեր ժողովուրդների միջև միջմարդկային շփումները:

Որոշվեց նպաստել մշտական հիմքի վրա հայաստանյան և ռուսաստանյան հասարակությունների երկխոսության հիմնմանը՝ նպատակադրվելով դրա առաջին նիստը անցկացնել 2022թ.՝ նվիրված դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին:



4. Ն.Վ.Փաշինյանը և Վ.Վ.Պուտինը նշեցին բարձրագույն մակարդակով վստահության մթնոլորտում կանոնավոր երկխոսության առաջնահերթ կարևորությունը: Այդ կապակցությամբ ընդգծվեցին Հայաստանի վարչապետի՝ Ռուսաստանի Դաշնության ներկայիս պաշտոնակատարի այցի այժմեականությունը և նշանակությունը փոխադարձ քաղաքական կապերի հետագա ամրապնդման, միջգերատեսչական փոխանակումների ընդլայնման, առևտրատնտեսական փոխգործակցության և եվրասիական տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացների խորացման, Հարավային Կովկասում իրադրության կարգավորման և կայունության բարձրացման համար:

Հաստատվեց տարբեր մակարդակներով երկրորդ արտաքին քաղաքական խորհրդատվությունների անցկացման փորձառության օգտակարությունը: Շեշտադրվեց հայ-ռուսաստանյան միջխորհրդարանական ինտենսիվ երկխոսության շարունակության պահանջվածությունը: Նշվեց Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության բարձր մակարդակը:

5. Առաջնորդները գոհունակություն հայտնեցին Հայաստանի և Ռուսաստանի միջև ապրանքաշրջանառությունը կայուն աճի հետագծին դուրս բերելու ուղղությամբ աշխատանքի արդյունքներով: Ընդգծվեց առևտրի անվանակարգի դիվերսիֆիկացման և ծավալների հետագա առաջանցիկ աճի, արտադրության տարբեր ոլորտներում կոոպերացիայի զարգացման, Եվրասիական տնտեսական միության մեխանիզմների ակտիվ գործադրման անհրաժեշտությունը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց խրախուսել երկու երկրների գործարար շրջանակների միջև սերտ կապերի հաստատումը, այդ թվում միջտարածաշրջանային և տեղական ինքնակառավարման ձևաչափերով՝ գործարար առաքելությունների մեխանիզմների գործադրմամբ: Դրական գնահատվեց Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 2022-2025թթ. համար տնտեսական համագործակցության ծրագրի վերջնականացման ուղղությամբ իրականացված աշխատանքը:

6. Նշվեց Հայաստանի Հանրապետության և

Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի, ինչպես նաև արդյունաբերության հարցերով աշխատանքային խմբի բարձր պահանջվածությունը և արդյունավետությունը՝ երկրորդ գործնական պայմանավորվածությունների մշակման և իրականացման տեսանկյունից: Փոխադարձ հետաքրքրվածություն արտահայտվեց Հայաստանի տարածքում արդյունաբերական ցուցահանդեսների մշտական անցկացման, այդ թվում բարձր տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության շեշտադրմամբ:

Կողմերը որոշվեցին ռուսաստանյան տնտեսական օպերատորների՝ Հայաստանում ամբողջական և ժամանակակից արտադրական ցիկլի ստեղծման մտադրությունը: Հետաքրքրվածություն հայտնեցին էներգետիկայի զարգացման, այդ թվում վերականգնվող էներգետիկայի ծրագրերի մշակման հարցում հիմնված էներգետիկական անվտանգության և անկախության, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի և կայուն զարգացման սկզբունքների հիման վրա:

Որոշվեց հետայսու ևս նպաստել դեպի Հայաստան ռուսաստանյան ներդրումների հոսքին: Ընդգծվեց, որ Ռուսաստանից տնտեսական օպերատորները Հայաստանի Հանրապետության հիմնական հարկատուների թվում են, ապահովում են աշխատատեղերի զգալի քանակի ստեղծումը և ընդլայնում կադրերի պրոֆեսիոնալ պատրաստման հնարավորությունները:

Գոհունակությամբ նշեցին երկու երկրների տարածաշրջանների միջև կապերի ընդլայնման, գործարար կապերի ամրապնդման, համատեղ արտադրությունների ստեղծման և ներդրումային երկխոսության ինտենսիվացման նպատակով՝ Հայ-ռուսաստանյան գործարար խորհրդի ստեղծման ուղղությամբ տարվող Կողմերի աշխատանքը:

Կողմերը հաստատեցին պատրաստակամությունն ընդլայնել ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համագործակցությունը: Որոշվեցին Հայկական ԱԵԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգումը և նպատակադրվածություն հայտնեցին նոր էներգոբլոկների կառուցման մշակման շուրջ:

Ընդգծվեց Եվրասիական տնտեսական միության շրջանակներում էներգառեսուրսների ընդհանուր շուկայի հետևողական ձևավորման ուղղությամբ համատեղ արդյունավետ աշխատանքը:

7. Կողմերը մտադրություն հայտնեցին

Ներքին Հանդը՝ Սյունիքի հարավ-արևելյան դարպասը, աբգանի մեջ է

Սկզբը՝ էջ 1

Լեյան մատուցելու, այլ գյուղից 4,5 կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևմուտք: Իմիջիայլոց, այդ հենակետ-անցակետը որևէ խոչընդոտ չի հարուցում եկող-գնացող մեր բնակիչներին:

Ձեռնարկված քայլերը, սակայն, ըստ գյուղաբնակների՝ բավարար չեն... Սահմանի վրա կան տեղեր, որոնք շարունակում են մնալ խոցելի, ինչի մասին գյուղի պատասխանատուները քանիցս տեղեկացրել են պատկան մարմիններին: Եվ նման շատ հարցեր, որոնք մտահոգում են գյուղացիներին, հաճախ նաև անորոշության, անվստահության տեղիք տալիս...

Ներքին Հանդում ապրիլի 20-ին հանդիպումներ ունեցանք բնակիչների, նաև գյուղի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանի հետ. հայրենի եզերքի իսկական նվիրյալ է գյուղի ղեկավարը, ում առնչվել էինք նաև Արցախյան երրորդ պատերազմի ժամանակ՝ գյուղի արևելյան ուղղության առաջնագծում, իսկ հիմա մտահոգ է իր բնօրրանի հիմնախնդիրներով:

– **Պարոն Բաղդասարյան, նախ՝ գյուղում իշխող մթնոլորտի մասին՝ մարտյան հայտնի իրադարձություններից հետո:**

– Հուլիսից, խուճապի մասին խոսք

լինել չի կարող, բայց կա մտահոգություն... Այս պահին գյուղում ապրում է 31 ընտանիք, այդքան էլ եղել է:

– **Ի՞նչ տեղի ունեցավ գյուղի մերձակայքում այս տարվա մարտի առաջին օրերին:**


– Թշնամու կողմից առաջխաղացում եղավ, եկան ու նստեցին, հետո էլ սկսեցին ճանապարհ կառուցել. մոտ 750 մ առաջ են եկել: Դրան հակակշիռ քայլեր ձեռնարկվեցին մեր կողմից. իրենց դեմ հանդիման մեր մարտական դիրքերն են:

– **Եվ եթե փորձենք ընդհանուր գծերով գնահատել գյուղի անվտանգության վիճակը...**

– Չանգելանի կողմն ինչպես կար, այնպես էլ մնում է. կանգնած ենք և՛ մենք, և՛ իրենք, միջտեղայն չեն լինում: Միայն ճանապարհ են կառուցում նրանք, որ դեռ ավարտված չէ: Սահմանի մոտակայքում հողեր ունենք՝ 40 հա այգի, որ չի օգտագործվում. ռիսկերը մեծ են...

– **Ներգյուղական խնդիրների մասին կուզենայինք իմանալ ևս մեկ անգամ:**

– Խմելու ջրի խնդիր ունենք, ներքին ցանցն էլ շարքից դուրս եկած վիճակում է: Անասուններն ամառային արոտներ հասցնելու գործում էլ ռիսկեր կան՝ պայմանավորված աղբրեջանցիների վերջին առաջխաղացմամբ:



– **Կառավարություն ուզում է գյուղում նոր դպրոց կառուցել կամ եղածը հիմնադրոգել:**

– Մասնագետներ են եկել, չափազրումներ են արել... Բայց ու՞մ համար են դպրոց կառուցում, յոթ դպրոցական ունենք:

– **Այգիներից բացի մյուս հողերը հաջողում էք մշակել:**

– Աշնանացան ցորենի ցանքերն ունենք՝ 15 հա-ի վրա, տնամերձերն են մշակվում ապահովված են ոռոգման ջրով:

– **Ուրիշ ինչո՞վ են զբաղվում գյուղացիները:**

– Մեղվապահությունն է զարգացած, ամեն ընտանիք մեղվաբուծությամբ է նաև զբաղված, յուրաքանչյուրը՝ 30-40, որոշները՝

մինչև 100 փեթակ: Կարելի է ասել՝ յուրաքանչյուր ընտանիք (բացի գյուղատնտեսությամբ զբաղվելուց) մի աշխատող ունի՝ դպրոցում են, անտառտնտեսությունում, «Շիկահող» պետական արեղիցում:

Բասուտա գետի հովիտը սովորական տարածք չէ մեզանում... Ներքին Հանդ գետի Նախ հայտնվեցինք Մթնանոթի սկզբնամասում, իսկ Մթնանոթը, նաև Ներքին Հանդն ու Սոսիների պուրակը վաղուց աշխարհագրական վայր չեն սոսկ:

Մթնանոթը մեր ընկալումներում Ակսել Բակունցի «Մթնանոթը» պատմվածաշարի գեղարվեստական կուտակումների միջավայրն է, ասել է թե՛ այն հոգևոր տարածություն է հայոց մեջ...

Այնուհետև եղանք Ներքին Հանդում. գյուղամիջով հոսում է Բասուտա գետը. այդ վայրը Սոսի սրբազան ծառի հայաստանյան «բնակատեղի» է: Ըստ մասնագետների՝ Սոսիների պուրակի հայաստանյան հատվածում, որ 64 հա է, ներկայումս հաշվվում է չորս հազար սոսի:

Սոսիների մի տեսակը՝ արևելյան սոսին, Հայաստանում հազարամյակներ շարունակ համարվել է սրբազան ծառ: Հավատացյալներն ունենդրելով սոսիների ստափյունը՝ պատգամախոս ոգիների «կամբով» արել են գուշակություններ...

Ներքին Հանդի բնակիչների հետ շփվելուց հետո, երբ արդեն Սոսիների պուրակում էինք, «սոսիների ազդեցությամբ» ինքներս էլ ականա գուշակություններ արեցինք՝ հայոց Սյունիքի, հայոց Արցախի երթը՝ հազարամյակների խորքից եկող ու հավերժ միտված, ոչ ոք չի կարող խաթարել...

Լ նպաստել Հայաստանի և Ռուսաստանի տարածաշրջանների միջև գործնական փոխգործակցության խորացմանը, այդ թվում ամենամյա միջտարածաշրջանային համաժողովների մեխանիզմի գործադրմամբ: Աշակցություն հայտնեցին Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև միջտարածաշրջանային համագործակցության 2022-2027թթ. ծրագրի համակողմանի իրականացմանը, տարածաշրջանների և մուկիցիպալ միավորների միջև խաչաձև կապերի հաստատմանը:

8. Առաջնորդները հաստատեցին նոր կորուսվորության COVID-19 վարակի, այլ վտանգավոր վարակների և կենդանիների վարակների տարածման դեմ պայքարին ուղղված համատեղ գործողությունները շարունակելու մտադրությունը: Անթրոպոլոգիայի համալսարանի համակարգի թեմայի քաղաքականացումը, արտահայտվեցին COVID-19-ի հետևանքների հարթահարման համար համընդհանուր ջանքերի և վարակիչ հիվանդությունների տարածումը թույլ չտալու օգտին:
9. Ն.Վ.Փաշինյանը և Վ.Վ.Պուտինը մտահոգություն հայտնեցին մի շարք երկրների կողմից միակողմանի սահմանափակող միջոցների կիրառման կապակցությամբ: Մտադրություն հայտնեցին միասին հարթահարել նշյալ միջոցներով պայմանավորված մարտահրավերները, այդ թվում՝ երկու երկրների պարենային և էներգետիկ անվտանգության, լոգիստիկայի և այլ բնագավառներում:
10. Կողմերը մտահոգություն հայտնեցին հակաիրավական և վնասակար գործողությունների իրականացման, պետությունների ներքին գործերին միջամտելու և նրանց սուվերենությունը խաթարելու նպատակով ժամանակակից տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների օգտագործման աճող միտման կապակցությամբ: Ընդգծեցին միջազգային տեղեկատվական անվտանգության բնագավառում երկկողմ համագործակցության ամրապնդման նշանակությունը: Հաստատեցին տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում, նախևառաջ ՄԱԿ-ում, միջազգային տեղեկատվական անվտանգության ապահովման ուղղությամբ կառուցողական փոխգործակցություն իրականացնելու նպատակադրությունը:
11. Առաջնորդները ընդգծեցին կենսաբանական անվտանգության ապահովման բնագավառում Երևանի և Մոսկվայի միջև ձեռքբերված պայմանավորվածությունների հետագա իրականացման կարևորությունը, այդ թվում 2021թ. մայիսի 6-ի Կենսաբանական անվտանգության ապահովման հարցերով փոխընթացային հուշագրի հիման վրա: Հաստատվել է, որ երկու պետությունների տարածքները չեն տրամադրվելու կենսանվտանգության ոլորտում միմյանց հետաքրքրությունների դեմ ուղղված գործունեության իրականացման նպատակներով երրորդ երկրների կողմից օգտագործման համար:
12. Կողմերը, պահպանելով ընդհանուր անցյալի նկատմամբ միասնական մտնեցումները, մտադրություն հայտնեցին շարունակել Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքների վերանայման և պատմության խեղաթյուրման դեմ պայքարը: Պայմանավորվեցին մեծացնել ռաֆիզմի, այլախոսության, կենսաբանական, ինչպես նաև ազգային, լեզվական կամ կրոնական խտրականության, այդ թվում Հայաստանում և Ռուսաստանում բնակվող քաղաքացիների և հայրենակիցների իրավունքներին և օրինական շահերին առնչվող ցանկացած դրսևորումներին հակազդելու ուղղությամբ ջանքերը:
13. Առաջնորդները արտահայտվեցին մշակույթի և կրթության, աշխատանքի և սոցիալական հարցերի պաշտպանության, տեղեկատվության, գրոսաշրջության, սպորտի և շրջակա միջավայրի ոլորտներում համագործակցության հետագա խորացման օգտին: Այս համատեքստում կարևոր գործիքներ են՝ Կրթության բնագավառում համագործակցության հարցերով երկկողմ միջգերատեսչական աշխատանքային խումբը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության միջև 2022-2025թթ. համար համագործակցության ծրագիրը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջև 2022-2023թթ. համար սպորտի բնագավառում փոխընթացային հուշագրի իրականացման գործողությունների ծրագիրը, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության և Ռուսաստանի Դաշնության բնական պաշարների և էկոլոգիայի նախարարության միջև 2022-2023թթ. համար շրջակա միջավայրի բնագավառում համագործակցության հուշագրի իրականացման ծրագիրը:

14. Ն.Վ.Փաշինյանը և Վ.Վ.Պուտինը պայմանավորվեցին ընդլայնել համագործակցությունը ֆունդամենտալ գիտության բնագավառում համատեղ գիտաարտարական համալիրների հիմքի վրա՝ պահանջվող բարձրտեխնոլոգիական արտադրանքի մշակման շեշտադրմամբ: Պատրաստակամություն հայտնեցին խրախուսել երկու երկրների համալսարանների, հետազոտական ինստիտուտների կապերը և նոր բիզնես-նախագծերը (ստարտափներ), ինչպես նաև նպաստել գիտության, կրթության և երիտասարդական քաղաքականության ոլորտներում փոխգործակցության զարգացմանն ուղղված կոնգրեսների, համաժողովների, սեմինարների, ցուցահանդեսների և այլ միջոցառումների անցկացմանը:
15. Առաջնորդները արտահայտվեցին երկու երկրների միջև երիտասարդական փոխանակումների ակտիվացման օգտին՝ հիմնվելով հայ-ռուսաստանյան երիտասարդական ֆորումների և Երևանի համար գերակա համարվող մասնագիտություններով և Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի միջոցների հաշվին նախապատրաստական ուղղություններով բարձրագույն կրթության ռուսաստանյան կրթական կազմակերպություններում ուսուցման համար Հայաստանի քաղաքացիների ընդունելության մեխանիզմների վրա:
16. Փաստեցին «Մոսկվայի տուն» մոսկովյան մշակույթային-գործարար կենտրոնի, Երևանում ռուսական գրքի տան և Կ.Ս.Ստանիսլավսկու անվան Երևանի պետական ռուսական դրամատիկական թատրոնի կողմից իրականացվող օգտակար աշխատանքը մշակույթի և կրթության ոլորտներում շփումների սերտացման համար: Արտահայտվեցին երկու ժողովուրդների միջև մշակույթային կապերի ամրապնդմանն ուղղված զանգվածային միջոցառումների անցկացման, մասնավորապես՝ համատեղ ցուցահանդեսների, փառատների և Հայաստանի և Ռուսաստանի առաջատար արտիստների շրջագայությունների կազմակերպման օգտին:
17. Ն.Վ.Փաշինյանը և Վ.Վ.Պուտինը պայմանավորվեցին նպաստել Ռուսաստանում հայկական սփյուռքի և Հայաստանում ռուսաստանյան սփյուռքի ներուժի բացահայտմանը՝ երկկողմ մշակույթային-հումանիտար կապերի ամրապնդման և երկու երկրների սոցիալական նշանակության նախաձեռնությունների իրականացման նպատակով: Ընդգծվեց սփյուռքի միավորումների գործունեության կարևորությունը տարբեր թեմիկ խմբերի միջև ազգամիջյան միասնության, ազգամիջյան համաձայնության և վստահության պահպանման և ամրապնդման առաջնության համար:
18. Կողմերը, ընդունելով տարածաշրջանային անվտանգության ապահովման գործում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության առանցքային դերը, հաշվի առնելով Կազմակերպությունում Հայաստանի ընթացիկ նախագահությունը, հաստատեցին պատրաստակամությունն ակտիվացնել ջանքերը հավաքական անվտանգության ուժերի և միջոցների ներուժի մեծացման, այդ թվում ՀԱՊԿ խաղաղապահ ուժերի, Կազմակերպության ճգնաժամային արձագանքման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ, ամրապնդել համակարգում և աջակցել ՀԱՊԿ գործընկերային կապերի ընդլայնմանը:
19. Ն.Վ.Փաշինյանը և Վ.Վ.Պուտինը կողմ արտահայտվեցին Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների առաջանցիկ առաջնությանը, ինտեգրացիայի զարգացման ռազմավարական ուղղությունների իրականացմանը, ներառյալ առանց սահմանափակումների, խոչընդոտների և բացառումների ներքին շուկայի ստեղծմանը, ազգային արժույթներով հաշվարկների մասնաբաժնի ավելացմանը:
20. Կողմերը արտահայտվեցին Անկախ Պետությունների Համագործակցության ձևաչափում փոխգործակցության՝ բոլոր ուղղություններով հետագա խորացման օգտին, այդ թվում արդիական միջազգային հարցերի շուրջ դիֆերոնցիալների կորորինացման, Համագործակցության մասնակից պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի բարձրացման և մշակույթային-հումանիտար կապերի ընդլայնման նպատակով:
21. Առաջնորդները նշեցին հավատարմությունը Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության սկզբունքներին և նպատակներին համապատասխան համընդգրկուն, իրավահավասար և ներկայացուցչական միջազգային համակարգի զարգացմանը՝ ուղղված խաղաղության, ժողովրդավարության և բոլոր ժողովուրդների բարգավաճման առաջնությանը: Կողմերը կներդնեն անհրաժեշտ ջանքեր ՄԱԿ շրջանակներում և այլ հարթակներում փոխգործակցության խորացման ուղղությամբ Հայաստանի և Ռուսաստանի դիֆերոնցիալ համարման նպատակով:
22. Ն.Վ.Փաշինյանը և Վ.Վ.Պուտինը խոր մտահոգություն հայտնեցին միջազգային անվտանգության ոլորտում բարդացող իրավիճակի առնչությամբ: Այդ կապակցությամբ Կողմերը մտադիր են հետապնդում ևս ամրապնդել փոխգործակցությունը տվյալ ոլորտում բացասական միտումներին հակազդելու նպատակով: Առաջնորդները ելնում են նրանից, որ ոչ մի պետություն, միություն կամ կալիֆիցա չեն կարող և չպետք է ապահովել իրենց անվտանգությունն այլ պետությունների անվտանգության հաշվին: Լշում են սպառազինությունների վերահսկման ճարտարապետության ոչնչացման և ի վնաս այլոց անվտանգության միակողմանի ռազմական առավելություններ ստանալու նպատակով գործողությունների անթույլատրելիություն, ինչը խաթարում է հավասար և անբաժանելի անվտանգության հիմնարար սկզբունքը, հանգեցնում հակասությունների և առճակատման:
23. Կողմերը ընդգծեցին միջազգային ահաբեկչությանը՝ բոլոր ձևերով և դրսևորումներով, վերջինիս հետ կապված ծայրահեղականությանը, թմրամիջոցների, զենքի, սպառազինությունների և պայթուցիկ նյութերի առօրինակային շրջանառությանը հակազդելու, անդրազգային կազմակերպված հանցավորությանը, ինչպես նաև երկու երկրների անվտանգության այլ մարտահրավերներին և սպառնալիքներին հակազդելու նպատակով համատեղ ջանքերի, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսական մուղման արգելումների և ուղիների արգելափակման ջանքերի ուժեղացման պահանջված լինելը:
24. Առաջնորդները մտքեր փոխանակեցին Հարավային Կովկասում իրավիճակի մասին: Արտահայտվեցին Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարների պարբերական հանդիպումների շրջանակներում կառուցողական աշխատանքի շարունակման և երեք առաջնորդների՝ 2020թ. նոյեմբերի 9-ի, 2021թ. հունվարի 11-ի և նոյեմբերի 26-ի պայմանավորվածությունների հետևողական իրականացման օգտին՝ ի շահ տարածաշրջանի կայունության, անվտանգության և տնտեսական զարգացման ապահովման: Շեշտեցին ռուսաստանյան խաղաղապահ զորակազմի որոշիչ ներդրումը Լեռնային Դարաբաղի անվտանգության ապահովման, բնակչության կյանքի համար բարենպաստ և անվտանգ պայմանների ստեղծման գործում: Ընդգծեցին հումանիտար անհետաձգելի հարցերի հրատապ լուծման և քաղաքական-դիվանագիտական միջոցներով Լեռնային Դարաբաղյան կարգավորման պահանջվածությունը:

25. Ն.Վ.Փաշինյանը և Վ.Վ.Պուտինը ընդգծեցին Հարավային Կովկասում բոլոր տնտեսական կապերի և տրանսպորտային ուղիների ապաշրջափակման հարցով եռակողմ աշխատանքային խմբի գործունեության ակտիվացման կարևորությունը՝ Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի փոխվարչապետների համատեղ նախագահությամբ: Ռուսաստանյան կողմը պատրաստ է մասնակցել Հայաստանի երկաթուղային ենթակառուցվածքների, այդ թվում Հայաստանի Հանրապետության Սյունիքի և այլ մարզերում երկաթուղու վերականգնման նախագծերում:
 26. Կողմերը պայմանավորվեցին, համաձայն 2021թ. նոյեմբերի 26-ի եռակողմ պայմանավորվածությունների, արագացնել հայ-ադրբեջանական սահմանի շրջանում սահմանազատման և անվտանգության հարցերով երկկողմ հանձնաժողովի ստեղծումը՝ Կողմերի հարցումով Ռուսաստանի Դաշնության խորհրդատվական աջակցությամբ:
 27. Առաջնորդները միասնական էին Ռուսաստանի աջակցությամբ Ադրբեջանի և Հայաստանի կրոնական գործիչների և հասարակության ներկայացուցիչների միջև կայացած շփումների բարձր օգտակարության գնահատականում, ինչը նպաստում է երկու երկրների ժողովուրդների միջև «կամուրջների կառուցման»: Նման պրակտիկան շարունակվելու է:
 28. Կողմերը պայմանավորվեցին ակտիվացնել Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի եռակողմ փոխգործակցությունը՝ Ադրբեջանի և Հայաստանի միջև, ընդհանուր առմամբ, տարածաշրջանում հարաբերությունների կարգավորմանն աջակցելու նպատակով:
 29. Կողմերը պայմանավորվեցին ակտիվացնել Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի եռակողմ փոխգործակցությունը՝ Ադրբեջանի և Հայաստանի միջև, ընդհանուր առմամբ, տարածաշրջանում հարաբերությունների կարգավորմանն աջակցելու նպատակով:
 30. Կողմերը նշեցին «3+3» տարածաշրջանային խորհրդատվական ձևաչափի հաջող մեկնարկը, որը կոչված է տրամադրել լրացուցիչ հնարավորություններ տարածաշրջանի բոլոր երկրների միջև երկխոսության առաջնության և բազմապլանային համագործակցության համար:
- Հայաստանի Հանրապետության վարչապետը և Ռուսաստանի Դաշնության նախագահը վստահություն հայտնեցին, որ Մոսկվայում կայացած արդյունավետ բանակցությունները կնպաստեն հայ-ռուսաստանյան բազմապլանային առանձնաշնորհյալ դաշնակցության հետագա ամրապնդմանը:
- Ն.Վ.Փաշինյանը երախտագիտություն հայտնեց Վ.Վ.Պուտինի կողմից ցուցաբերած ջերմ ընդունելության համար և հաստատեց ռուսաստանյան առաջնորդին հասցեագրված երևանյան այցելելու իր հրավերը՝ 2022թ. երկրորդ կեսին՝ ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանին կապակցված: Հրավերը երախտագիտությամբ ընդունվեց:

Բանաստեղծ, թարգմանիչ Գագիկ Դավթյանը 75 տարեկան է

Անդրոս Գագիկ Դավթյանը, ճանապարհորդ, բացառապես ինքն է հարթել համար տեղանքով ու պատվախնդրորեն, հաճախ արհամարհելով «բաց ճակատով հաստ պատերին զարկվելու» ստույգ վտանգը, որից տակավին դպրոցական ըմբոստ պատանուն զգուշացնում էր Պարույր Սևակն իր նամակներից մեկում. «Պետք չէ, սիրելիս, ճակատդ ափսոս է - «էլի պատը կմտա պատ, կպակասի մի լավ ճակատ»»:


Դավթյանը Գ. Դավթյանի ճանապարհին ամփոփել կենսագրական սովորական կաղապարների մեջ՝ ծնվել է..., սովորել է..., ավարտել է..., ծառայել է..., աշխատել է... և այլն: Այլապես չափի կարողանայինք գոնե արձանագրել, որ նա, իր բնօրրանի պատմական, հայեցի տեղանունները, այդ թվում օտարահունչ Դավթյանի Կապան անունը վերականգնելու ըմբոստ պահանջատերն ու առաջին զանգահարը եղավ տակավին խորհրդային տարիներին: Չեչտ է այսօր տեղի-անտեղի հողովել մեր ազգանվեր մեծերի անունները, բայց նա էր, ով «խորհրդային Հայաստան» թերթում հանդես եկավ իր մեծ համագյուղացու՝ Հայաստանի առաջին հանրապետության

հիմնադիր Արամ Մանուկյանի կյանքն ու գործը ոգեկոչող լայնածավալ հրապարակումներով այն հեռավոր օրերին, երբ մարդիկ տակավին վախվորած շշուկով էին տալիս նրա անունը: Ամեն ինչ չես թվարկի: Մանավանդ՝ ինքը դրա կարիքը չունի: Եվ եթե հիշատակեցինք այս երկու դրվագը, ապա այն երիտասարդների համար, որոնց հավաքական անունն է անկախության սերունդ:

Գագիկ Դավթյանի ճանապարհի յուրաքանչյուր հանգրվանը մի նոր սկիզբ է նշանակում: Վկա նրա հիշատակները հայրենի Դավիթբեկի դպրոցում, որի անվանակոչման նախաձեռնողն ու իրականացնողն է եղել, վկա Արցախյան առաջին պատերազմի ծանր տարիներին գործունեությունը «Հայաստանի Հանրապետություն» թերթի հիմնադիր խմբագրակազմում, վկա «Սյունիք» թերթը, որի հիմնադիր գլխավոր խմբագիրն է եղել և վերջապես վկա այն պատկառելի ժառանգությունը, որ այսօր կարող է նա աշխարհի 17 լեզուներով և որ սեփականությունն է ոչ միայն հայ գրականության ժառանգության:

Ծնունդը շնորհավոր, սիրելի Գագիկ Դավթյան:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»



Բանը՝ խղճի մտքը և հանուն լույսի

■ Խոհեր Գագիկ Դավթյանի պոեզիայի ներշնչանքով. հատվածներ



ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Պարույր Սևակը «Ավագ գրողի ողջերթի խոսքով» հրապարակման մեջ («Գարուն», 1970, N5) գրում է, որ, լույս մի մղումով է մարդը խոսում՝ բան ասելու նպատակով, իսկ եթե գրում է՝ առավել ևս, - ապա, մի բանի նախադասությունն հետո, նկատում:

- Գրականության մեջ էլ կամ այսպես պիտի լինի, կամ ոչինչ էլ չպիտի լինի: Գ. Դավթյանի մեջ, ահա, ինձ դուր է գալիս նրա այն ձգտումը, որ ուզում է բան ասել, և ասել այնպես, որ բան հասկացվի: Իսկ ի՞նչ ակնկալություն ունեն մեծ բանաստեղծը իր սկսնակ գրչակցին հորդորելիս, թե գրիչը ձեռք առնելիս կարևոր է ասելիք Բան ունենալ և այն մատուցելու եղանակներին տիրապետել: Երբ ասելիքն է կարևորվում իր պարունակությամբ և բովանդակությամբ, երբ աշխարհընկալման դիտակետը գյուտ է ու հայտնություն, ուրեմն ասա խոսքը ընթերցողին՝ եթե ոչ այսօր, ապա վաղը նա կըմբռնի դրա արժեքը՝ Խոսքի արժեքը. ի ցույց դիր և ուսուցանիր: Պոեզիան հաճույք ու գեղեցկախոսությունն չէ միայն, այլև խրատ ու դաս, այլև ուղղորդում դեպի լույսն ու կատարյալը, անհատի ու հանրության ինքնադաստիարակման հուշագիր: Ով կկարդա և կհասկանա խորհուրդը նրա, կապրի գեղեցկության որոնումների տեսիլներով ու պատրանքներով...

Իր ծննդավայր Սյունյաց երկրից է բացվում Գ.Դավթյան բանաստեղծի հոգու և մտքի անհուն հայացքը և տեսահորիզոնը մեծ աշխարհի վրա՝ Լեռնահայաստանի երկինք միտող ու ամպերի թանձրոյթի մեջ խորխոս միլրճով Խուստուկի լեռան գագաթից մինչև Հայիճորի բազմադարյա անտառի ծանկները, մինչև երկրի ընդերքը ճեղքող կիրճերը, Դավիթ բեկի անմռունչ հայրենապաշտությունից մինչև Լճիեղյան ուխտի կածաններ, մինչև

Տաթևի խորագետ սյուն, մինչև Տիգրեական սահմանադրությունը համակարգող Զարահունջի աստղագիտության խորհուրդը...

Նախախնամության ինչպիսի բարեհաճություն, երբ ապագադ կանխորոշում և ինչ որ չափով ուղղորդում է ժամանակի մեծագույն բանաստեղծներից մեկը՝ նշմարում թո մեջ ստեղծագործողին և առնելով իր ավի մեջ հայրաբար հուշում է, որ թո կոչումը գրականության մայրուղով է անցնում, և դու՛ հեռավոր մի շրջանում ապրող դպրոցականդ, հնազանդորեն հետևում ես նրա խորհրդին, որովհետև այդպես է կամեցել թո ճակատագիրը: Պարույր Սևակն է եղել Գագիկ Դավթյանի գրական կնքահայրը, նրա մուտքը բանաստեղծական հեռաստաններ խրախուսողն ու ոգեշնչողը...

Հայտնի բարոյական առաքիլություններ են. ունենալ հավատ, որը թեզ ճանաչել կտա Աստծուն, Հոյսը կառաջնորդի առ Աստված, Սերը կմիավորի Աստծո հետ: Իսկ Աստված հենց ինքը կատարելությունն է, Աստվածապաշտությունը՝ հոգևոր - բարոյական հարստություն: Իսկ եթե առաջնորդվենք փրկիստիպական այն ըմբռնմամբ, որ Մուսան Տիգրեբեկի խիղճն ու պատկերն է, ապա պոետն Աստծո ընտրյալն է երկրի վրա, որը մարդկանց մեջ սերմանում է հոգևոր - բարոյական արժեքներ: Ահա սա է, որ վարպետորեն իրագործում է Գագիկ Դավթյանը՝ հաղորդագրություններ ուղարկելով ընթերցողին, թե դու մենակ չես, մարդ արարած, դու մատնված չես անտարբերության, - ընթերցողին է աստարում բանաստեղծը՝ փորձելով թեթևացնել նրա հոգսը, Լույս արթնացնել խավարի մեջ, որպես հուսո կանթեղ, որ եղիցի լույս...

Ճամբարտ պոեզիան ճանաչելի է դարձնում աշխարհը և թեզ, երբ պոետը բացում է հոգու և իրականության փակագծերը, բացում աշխարհընկալման վարագույրը կանթի բեմահարթակի, որտեղ թեզ հրավիրում է հանդիսատեսից դերակատար դառնալու և իր ուղեկիցը դառնալու սկզբի և վերջի անվերջանալի որոնումներում՝ «սկիզբն են գտնում վերջը կորչում է, վերջը գտնում են սկիզբն է կորչում»...

Գեղարվեստական խոսքը շքեղ է, երբ բացառիկ ասելիք ունի, և այն արտահայտում է պատկերավոր՝ բացահայտելով թո հոգևոր և մտավոր ներաշխարհը նախ թեզ համար, ապա հուշելով, որ այդ մտավոր և հուզական

աշխարհում դու միայնակ չես, այլ գոյություն ունի մի ամբողջ հանրույթ, որը կարող է ինքնաճանաչման, ինքնաբացահայտման, իր սկզբունքների և մտեցումների ինքնահամոզման ու հաստատման: Դավթյանը աշխարհի և կյանքի համապատկերում՝ հնագետի պեղածոյի հանգույն թո առջև է դնում վերին գերազանցություն ճշմարտությունը, որը ոչ միայն բացահայտում է այս կամ այն երևույթը, միտքն ու զգացմունքը, այլև հուշում խղճիդ, հոգուդ ու մտքիդ ապրելու դավանաբանությունն ու վարդապետություն: Սերն է հովանավորն ու ջահակիրը ամենի, այն կանացի մարմին է արուկ մտապատկերում սոսկ որպես շփում, շարժում ու կիրք, իսկ իրականում՝ հոգու և մտքի միաձուլման մարմին: Այդ իմաստությունը հասանելի է դառնում բանաստեղծի հոգեմտավոր ամբարի հարստությամբ, որտեղ համատեղ են բնագետն ու մարդաբանը, գեղագետն ու քաղաքագետը, հասարակական-քաղաքական միտքն ու նրբանկատ զգացմունքայինը:

Այդպիսին է Գագիկ Դավթյանի բանաստեղծական հերոսի դավանանքի նկարագիրը, նրա քնարական-քաղաքացիական կերպարը...

Բարու և չարի, հրեշտակի ու հրեշի, լույսի և մթան հարատև հակասության և բախումների տիրույթում, ինչպես ըմբոստության մարտակոչ է հնչում ինքնամաքման և սրբագործման վերջնականատակը: Բանաստեղծը գրուցում է ինքն իր հետ, մենախոսում ինքնախոստովանությունների հանգույն, սակայն դրանք ոչ միայն անձնական են, այլև հասցեագրված են համայնի և վերաբերում են յուրաքանչյուրին: Դրանց գաղտնագրման բանալին անկեղծությունն ու սրտացավությունն են, Խղճի հետ հաշտ լինելու և Կյանքը լույսով ողողելու միտումը...

Բառերով նկարել կտավներ նրբագեղ՝ և գույներ-երանգներ, և մեղեդի՝ ձայն-հնչյուններ, և պատկերել մտքի արծաթաթիչը սլացք, նկարագրել հոգու տառապանք-տվայտանք ու նաև կամք ու ոգեղեն ամրություն, ու նաև մկանի ջղախի պրկումներ, պեղումներ հոգու և մտքի, ու անթիվ-անհամար գյուտ - հայտնություններ...

Ահա այսպես բանաստեղծն իր կտավն է երկնում, իր երգն է լսելի դարձնում, որի մեղեդին առնվելով է ու խնեթ, որի տեքստը գեղեցիկ է ու վեհ, և կտավն իր չունի ներկայակալ, այլ հորդում է անհայտ ու անվերջանելի ստեղծագործական երկունքի ակունքներից... Դու հող ես տեսնում, պոետը լսում է նրա

շնչառությունը: Դու ժայռ ես տեսնում, պոետը զգում է նրա արևահար ջերմությունը: Դու ծառ ու ծաղիկ ես տեսնում, պոետը մտորում է բնության զարմանահրաշ բազմազանության մասին: Դու ժամանակը տարիներով ես չափում, նա երևույթների տրամաբանության հոգեբանությամբ: Դու բայում ես գետնի վրա, նա պատմության ոտնահետքերի հերթակալությունն է վերականգնում՝ ժամանակների պատճառահետևանքային կապերի մեջ: Դու նայում ես, նա տեսնում ու դիտում է...

Պոետը միայն ասացող-պատմող ու նկարագրող չէ, նա արձանագրում է երևույթի խորքը և այն կանթեղն է վառում ու հսկում, որ ոտք-խոփոք բարին դեմ չառնի, որ գոյություն ունեցողության վերադի և կրկն կյանք՝ Աստվածատուր, բովանդակալի, իմաստավորված...

Գագիկ Դավթյանն ասելիք ունի նաև տողատակում, հետևաբար այդ բանասացությունը ընթերցանության ենթակա չէ, այլ կարդալու, քանզի ասելիքը խորք ունի, որն անհրաժեշտ է պեղել, ունի տարածական և ժամանակային լայն ընդգրկում, քանզի ենթատեքստն ամփոփում է հոգևոր պատկերի ընդհանրացումներ, որոնց խորհուրդը խորին շարունակ շարժման, հախուռն ու անհանգիստ ընթացքի մեջ է՝ նախ և առաջ անցյալի և գալիքի մեջ ապրող ու դրանք կամրջող ժամանակակցի հայացքով և ընկալումներով: Եվ ասելիքն անցնում է բանաստեղծական բուրայով ու հասցեագրվում հանուրին, քանզի մտահոգությունները հանուն նրա են, այլ ոչ քնարական հերոսի, որի միտքը պրպտում է ընթերցողին բան ասելու նպատակով...

Գագիկ Դավթյան բանաստեղծն արմատներ ունի խորը ձգված պատմության, հայրենի եզերքի հողում, որը պեղում է անտրոսոլջ՝ ձգտելով հայտնաբերել նրա ծայրերից այն, ինչ անտես է եղել ցայսօր և հաղթահարում է նորանոր շերտեր: Դա է նրա ինքնաբերական խոսքի ազդեցիկության գրավականներից մեկը: Դրանք հանձնարարական և պատվեր չեն, այլ հոգու և մտքի ինքնաբերական արտահայտություններ: Այդպիսիք են նաև նրա թարգմանությունները, քանզի առաջնորդվում է հոգեհարազատության սկզբունքով, ու նաև այն համոզումով, որ պարտավոր է համամարդկային գաղափարներ կրող բարձրարժեք պոեզիային հաղորդակից դարձնել իր հայրենակիցներին: Ասել է թե՛ նա նաև արդի հայ բանաստեղծության դեսպանն է արտերկրում... Գագիկ Դավթյանի ստեղծագործությունները թարգմանվում են աշխարհի տարբեր լեզուներով՝ օտար ընթերցողներին պատկերացում տալով արդի հայ բանաստեղծության մասին: Նորանոր մտահոգումներ մաղթենք տարանդավոր գրողին և մտավորականին, ի շահ և ի փառս ժամանակակից հայ բանաստեղծական արվեստի... //

ՏՈՂԵՐ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ



ՍԻՐՈ ԿԱՄՐՑԻ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՊԱՅՄԱՆԸ

«Իմ մտերիմ հարևան, դու իմ աչքի լույսն ես», – ասում է իմաստուն վրացին: Կրաստանի ամենամոտ հարևանը Հայաստանն է, որի հետ նա ունի դարավոր գրական կապեր, ավանդական ջերմ հարաբերություններ՝ հերոսական անցյալով և հավերժական բարեկամությամբ: Անասան այս ավանդույթների շարունակողը և երկու ժողովուրդների միջև սիրո կամրջի պահպաններից մեկն է Կրաստանի ճշմարիտ բարեկամ, անվանի բանաստեղծ Գագիկ Դավթյանը: Հայ ընթերցողների հետ միասին նրա գիրը գնահատում են շատ երկրներում, բայց կարծում են կողմնակալ չեն լինի, եթե ասեն, որ նրան առավել սիրում ու հարգում են հատկապես Կրաստանում՝ իր փայլուն պոեզիայի ու թարգմանությունների համար: Մեզանում նա արժանացել է Կապիտիկ Մայակովսկու, Իվան Մալախովի, Գալակտիոն Տարիբեի մրցանակներին:

Անգնահատելի է նրա մեծ ներդրումը վրաց պոեզիայի հանրահռչակման մեջ: Աննա Կալանդաձեի, Մովսիսյան Մանուկյանի, Ջանսուղ Չարկվանիի, Մորիս Փոցիխիձիի, Բեսիկ Խարանապետի և վրացի բազմաթիվ ընտրյալ բանաստեղծների ստեղծագործությունները Գագիկ Դավթյանի թարգմանությամբ, արժանացել են հայ ընթերցողների բարձր գնահատականին: Ուրախ եմ, որ գրականութ-

յան սիրահարները նրա փայլուն թարգմանությամբ ծանոթ են նաև իմ բանաստեղծական գրքին: Շնորհավորելով իմ սիրելի ընկերոջն ու բանաստեղծին, շտապեմ ասել, որ մայիսին մենք նրա ներկայությամբ կնշենք իր փառավոր հոբելյանը Կրաստանում:

Մաղթում եմ երկարակեցություն, ընթերցողական չխամրող սեր և Հայրենիքի բարօրություն:
ՀԱՐԳԱՆԵՐՈՎ և ԼՎԻՐՎԱԾՈՒԹՅԱՄԲ՝ ՄԱՂՎԱՆԱ ԳՈՆԱՇՎԻԻ, ԿՐԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ



ԽԱՎԱՐԻ ՄԵՋ ՓԱՅԼԵԼՈՒ ԳԱՄԱՐ

Հարգելի բանաստեղծ, սիրելի իմ ընկեր Գագիկ Դավթյան.

Հրաշք է յուրաքանչյուր մարդու ծնունդն ու կյանքը: Ավելի մեծ հրաշք է ի ծնե բանաստեղծը, իսկ դու, անկասկած, այդպիսին ես: Քո ստեղծագործությունը գանձ է հայ ժողովրդի համար, այն շարունակությունն է այն մեծ խոսքերի, որոնք արարվել են քո հինավուրց երկրում՝ մեծ բանաստեղծների՝ Հոգու առաքյալների միջոցով:

Այսօրվա խառնաշփոթ աշխարհում մարդկությունը, առավել բան երբևէ, հոգևոր լույսի և բարձր պոեզիայի կարիքն ունի՝ խավարի մեջ փայլելու համար, բանի որ նա սրբազան հումանիզմի պահպանն է գրքայ ապամարդկայնացման աղետալիորեն արագացող գործընթացի մեջ: Իսկ քո պոեզիան փայլում է, բանի որ այն Ոգեղեն

մարմնավորում է: Ես հավատում եմ, որ ապագա սերունդները կգնահատեն քո հոգևոր աշխատանքն ու ժառանգությունը:

Սրտանց մաղթում եմ քեզ դեռ երկար ոգեշնչող ստեղծագործական տարիներ:

Առողջ լին: Շնորհավոր տոնը:
ԸՆ՝ ՈՐՄԱՆ ԿԻՅՅՈՎ ՍՈՑԻԱԼ, ԲՈՒՐՆԱՐԻԱ



ՊՈԵԶԻԱՅԻ ԵՐԱՅՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գագիկ ջան.

Մեր բանաստեղծական ու երկրային մտերմությունը սկսվել է անցյալ դարում համաշխարհային պոեզիայի հսկայական տարածություններում: Մեր թեմի տակ ունենալով Կապիտիկոսովը, Ալմա-Աթան, Երևանը և համաշխարհային մշակույթի այլ կենտրոններ՝ բանաստեղծական պատկերներով ու թարգմանություններով մենք ավելի ենք մերձեցել միմյանց Պոեզիայի մեծ եղբայրության մեջ:


Անսահման ուրախ եմ, որ քո թարգմանությամբ բանաստեղծություններս հնչեցին հայերեն, մտան համաշխարհային պոեզիայի անթոլոգիաների մեջ՝ կազմված բանաստեղծական մշակույթի մեծ գիտակից ճաշակով: Ուրախ եմ, որ իմ հյուրն էիր Աստանայի բանաստեղծական կենտրոնի պոեզիայի փառատոնին: Այսինքն՝ մեր բանաստեղծական եղբայրությունը շարունակվում է հիմա էլ՝ 21-րդ դարում:

Իսկ իմ «Թուխ լուսնի լացը» գիրքը քո թարգմանությամբ իմ գրա-

դարանի ամենակարգու տեղում է: Հիշեցնեմ նրանում տեղ գտած իմ էքսպրոմտը նվիրված քեզ:
Արարի՛ճը պահպանի թող, Աստված՝ քեզ հովանի, Ակունք ես դու շատրվանող, Եվ ստեղծող Բանի:

Ո՛վ է պահում սուրբ թելն անտես Մետրոպոլիտան գրում:
Չ՞ի հասկանա եվրոպան, թե Բարն ինչու է լուրմ:

Գրվում եմ քեզ և ի պատիվ քո հոբելյանի՝ բաժակ եմ բարձրացնում հայկական կոնյակով, որն աշխարհում բարձր է գնահատվում ֆրանսիական «Մարտելից»:
ԸՆ՝ ԺԱՆ ԲԱԽՏ, ՂԱՉԱԽՍԱՆ, ԱԼՄԱԹԻ



ՄԵՆՔ ԱՆԸՆԴՅԱՏ ՀԻՇԵՑՆՈՒՄ ԵՆԸ...

Հարգելի Գագիկ Դավթյան, Ձեր հրաշալի հոբելյանի կապակցությամբ մաղթում եմ Ձեզ ևս բազում ստեղծագործական սիրուններ: Ձեր գործունեությունը մեծ արժեք ունի լեհական գրականության համար և նպաստում է մեր ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդմանը: Մենք անընդհատ գրական աշխարհին հիշեցնում ենք, որ դուք Պոեզիայի և արվեստի եվրոպական ՅՈՒՆԵՍԿՕ մեդալի նշանավոր դասերից ենք՝ առաջինը հայ բանաստեղծներից, և ձգտում ենք Ձեր ստեղծագործությունը խթանել աշխարհի շատ երկրներում: Մեր այս աշխատանքը արտացոլված է Չինաստանի, Լեհաստանի, Կրաստանի, Ղազախստանի և Սերբիայի կարևորագույն գրական փառատոների հրավերներում, որոնք բազմազգի մասնակիցներին Դուք արժանապատվորեն

ներկայացնում եք ձեր հազարամյա երկիրն ու մշակույթը: Հուսով եմք, որ Դուք առողջ կմնաք և մենք երկար տարիներ կվայելենք Ձեր՝ հայ մեծ գրողի և թարգմանչի և, առաջին հերթին, հիմնադիր մարդու բարեկամությունը:

ՊՐԻՆԻՔ ՏՈՍԱԸ ԼԵՔՈՂԱ, ԼԵՅ ԲԱՆԱՍՏԵՐՑ, ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴՈՎՏՈՐ-ՊՐՈՑԵՍՈՐ, ՊՈԵԶԻԱՅԻ և ԱՐՎԵՍՏԻ ԵՎՈՐՊԱԿԱՆ ՀՈՄԵՐ ՄԵՂԱԼԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ



ՊԱՏՎՈ ՇՔԱՆԸՆ ԼԵՅԱՍԱՆԻՑ

Լեհական մշակույթի տարածման և զարգացման գործում նշանակալից ավանդի համար բանաստեղծ և թարգմանիչ Գագիկ Դավթյանը արժանացել է Լեհաստանի Հանրապետության Մշակույթի և Ազգային ժառանգության նախարարության «Լեհական մշակույթի նվիրյալ» Պատվո շքանշանի: Բանաստեղծի ծննդյան օրը՝ ապրիլի 4-ին «Նարեկացի» արվեստի միությունում կայացած Լեհաստանի, Ուկրաինայի և Կրաստանի վարպետների գեղանկարչական գործերի «Նոր սրբապատկեր» ցուցահանդեսի բացման արարողության շրջանակներում պարզվեց հանձնել **Հայաստանում Լեհաստանի դեսպան Պավել Չեպլակի:** Դաշնակահարուհի Լիանա Փիրոմովայի և «Malwy» երգչախմբի կատարումներից հետո Գագիկ Դավթյանը մասնակիցներին ընծայագրեց արդի լեհական պոեզիայի «Որպես ձեռքբերում» խորագրով իր թարգմանած անթոլոգիայի օրինակներին:

ՀԱՍԱՆԵԼԻ ՏԻԵՉԵՐԸ



ՆԵՐՍԵՆ ԱԹԱԲԵԿՅԱՆ

Բանաստեղծ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների թեկնածու

Ուրախ եմ, որ քո «հայրությունը» արդեն համարյա հարյուր տարվա պատմություն ունի: Չեմ ուզում ասել՝ Թագորի ստեղծագործության, որովհետև ստեղծագործություն ունենում են հատվածական կեցությունները, իսկ Թագորը ամենից առաջ և ամենից ավելի, – բացառապես, – միասնություն է, մեկ – ություն է: Եվ ահա մեկ դար տարբեր կողմերից փորձում ենք մերացնել այդ մեկ – ությունը: Ու կարծես հաջողում ենք: Թագորի տիեզերքը նվիր-

յալ թարգմանիչների ջանքով բացվում է մեր առաջ: Ո՛չ ամբողջը, իհարկե, ոչ միանգամից ու միաժամանակ. դա անհնար էլ է, սակայն տիեզերքի մասերի գյուտն, ի վերջո, հասնելու է ամբողջացման, և կատարյալ «հայ» Թագորի օրը գալու է: Այնպես որ, հայտնագործություններ եղել են ու պիտի լինեն: Այս անգամ հայտնության հերթը բանաստեղծ ու փորձառու թարգմանիչ Գագիկ Դավթյանին է, ում վաստակը իրավունք է տալիս ձեռնարկելու այդ դժվար «տիեզերագիտությանը»: Եվ արդյունքը փաստում է, որ իրավունքը արդարացված ու արգասաբեր է:

Թարգմանությունը բազում ծուղակներ ունի, և ամենավտանգավորներից մեկը, թերևս, «թարգմանություն» անելն է, այն է՝ տեքստը մի լեզվից մյուսին թարգմանելը: Այս ծուղակում հայտնվելու արդյունքը ապակուտակի վարդն է, գորգի դարձերեսը, գրի մուսիան, լավագույն դեպքում՝ ռոբոտը, մի խոսքով, գոյեմատիպ մի բան, որը հայտնաբերվում է զուգընթաց «մայր օրինակից», սակայն հատկանիշներից զուրկ է ընդհանրապես:

Թարգմանությունն, ըստ իս, ոչ թե թարգմանություն է կամ փոխարկություն, այլ՝ վերստեղծում, և թարգմանիչն էլ առնվազն համահեղինակ պիտի լինի, եթե չասենք ավելին: Վերստեղծման համար նույնիսկ ապրումակցությունն անբավարար է. ապրել է պետք,

ապրել՝ ինչպես, ինչով, ինչորեն և հանուն ինչի ապրել կամ ապրում է հեղինակը: Ավելին՝ նույն լիարժեքությամբ ապրել երկու մշակութային տարածքներում: Միայն այս դեպքում կունենանք ոչ թե սուկական թարգմանություն, այլ հայրենի գրականության փաստ:

Մա մեծ համարձակություն է, իսկ համարձակությունը հարթում է՝ հիմքում նվիրում ու փորձն ունենալով: Գագիկ Դավթյանի պարագայում այդպես է. ինքը ունեցել է համարձակությունը, մենք ունենք Գիրքը: Եվ Գիրքը հայախոս է ու ընթերցելի: Ուզում եմ հատկապես ընդգծել, որովհետև վարպետությունը թարգմանիչին օգնել է խոսք տալու ևս մի ծուղակից, որ հատուկ է բանաստեղծությանն ընդհանրապես ու Թագորին՝ մասնավորապես...

Ամենաբարդի ճշգրիտ արտահայտությունը ամենապարզն է: Հանրահայտ ճշմարտություն է, բայց առավել հաճախ չենք հավատում կամ վստահում ենք այս ճշմարտությունից: Մանավանդ երբ խոսքը վերաբերում է տիեզերական մտածողությանն ու աշխարհատեսությանը: Հնարավոր է սահմանել անսահմանը, այն էլ՝ պարզ ձևերի մեջ: Հենց այս կասկածանքն է հաղթահարել Գագիկ Դավթյանը և բարդի պարզ արտահայտությունը թարգմանել նույնպես պարզ, հարագատ ու համահունչ պարզ: Օրինակ, այսպես. Ամպերը գրեթե են նկարում երկնքում, Եվ սակայն նրանց տակ անունները չեն կնքում:

Սա՛ նմուշ տալու համար: Բանաստեղծություններից ծավալուն մեքերուններ անելն իմաստ չունի. նախ՝ գունաված սկզբունքը պահպանվում է բոլոր գործերում ու հիմնարար է, և երկրորդ՝ ընթերցողին չի կարելի զրկել բանաստեղծության հետ առաջին հանդիպման հաճույքից:

Մնում է միայն հավելել, որ Գագիկ Դավթյանը հետևողական է ոչ միայն Թագորի բանաստեղծական աշխարհը մեր առաջ բացելու, այլև այդ աշխարհի մեկնությունը մեզ ուղեկից անելու հարցում: Եվ կրկին Թագորի միջնորդությամբ ու օգնությամբ:

Խոսքը Ռաբինդրանաթ Թագորի Հարվարդի համալսարանում կարդացած դասախոսության՝ «Հարի հիմնախնդիրը» էստեի, Ալբերտ Էյնշտեյնի հետ զրույցի և ծանոթագրությունների բաժնի մասին է, յուրատեսակ հավելվածներ, որոնք իրականում հավելված չեն, այլ ինքնուրույն խոսք, որոնք, ինչպես ասացի, ընթերցողին ուղեկցում են Թագորի բանաստեղծության աշխարհում՝ բանաստեղծության սահմանները տեղաշարժելով դեպի անսահմանություն և այդ անսահմանությունը հարագատ դարձնելով ընթերցողին: Ինչն էլ, ի վերջո Թագորի խնդիրն է. մարդը Մասն է, բայց Աստված նրան Ամբողջ ճանաչելու շնորհ է տվել:

«Տիեզերքը հասանելի է մարդու անհատում անհատականությամբ: Անիմանայի ոչինչ չի կարող լինել մարդ անհատի համար»՝ ասում է Ռաբինդրանաթ Թագորը: Վկա՝ «Սահմանների սահմանից անդին» ժողովածուն...



Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց քաջորդիներին



Արտակ Առաքելյան. նա մի ծիլն էր մեր հողի...

Առաքելյան Արտակ Սեյրանի. ծնվել է 2000թ. նոյեմբերի 1-ին՝ Բռնակոթ գյուղում: Սովորել է Բռնակոթի միջնակարգ դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել էրևանի թիվ 52 դպրոցում: Ուսումնալարտելուց հետո ընդունվել է Երևանի Ազրարայի համալսարանի քոլեջ՝ կենտրոնացված գրուստի կենսատեխնոլոգիա բաժինը:

2018 թ. գորակազմել էր բանակ, ծառայում էր Իջևանի զորամասում: Արտակն օգնում էր թոյլերին, ինչով կարողանում էր, հրենից մեծերին հասնում էր, միայն թե՛ մի բանով սատարի... Հունվարին պետք է գորագրվեր ու պատվով հրաժեշտ տար զինվորական համազգեստին, բայց սկսվեց պատերազմը... Հայրենասեր զինվորն առաջինն էր շարքից դուրս ելել և ինքնակամ պատրաստակամություն հայտնել իրեն տանելու Արցախ: Գիտակցելով գնաց, բայց ոչ թե մահվան ընդառաջ, այլ՝ իր զինակից ընկերներին օգնության... Հոկտեմբերի 17-ին Արտակն արդեն Արցախում էր, հրետակոծությունների տակ, կյանքի ու մահվան պայքարի մեջ: Նա պիտի զար ու բոլորին պատմեր իր սխրանքների մասին, զարհուրելի պատերազմի մասին...

Ուժեղ հրետակոծության ժամանակ զինակից ընկերը վիրավորվում է. առանց մի վայրկյան իսկ մտածելու՝ շտապում է ընկերոջն օգնության՝ փորձելով փրկել կյանքը: Բավական երկար տարածություն ընկերոջը գրկած՝ ակասանետներից խուսափելով՝ մի կերպ հասնում են բարձունքին, որտեղից մի քանի քայլն արդեն փրկությունն էր, բայց թշնամու գնդակը երկուսին էլ գտավ ու... Երկար փնտրելուց հետո նրանց գտան կողք-կողքի... Հերոսացած Արտակ Առաքելյանի աճյունը հողին է հանձնվել Սիսիանի զինվորական պանթեոնում: //



Արթուր Գրիգորյան. Քաջարանի կարգալու

Արթուր Վուրդիայի Գրիգորյան, ծնվել է 1977 թվականին՝ Քաջարան քաղաքում: Ավարտել է տեղի թիվ 4 միջնակարգ դպրոցը, ապա սովորել Կապանի բժշկական քոլեջում, ստացել բուժակի մասնագիտություն: Ծառայել է ՀՀ զինված ուժերում, որից հետո ավարտել է Երևանի Արտաքին տնտեսական կապերի համալսարանի տնտեսագիտության բաժինը: Աշխատել է Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տեխնոլոգիական ավտոմատացման բաժնում, զբաղեցրել պատասխանատու պաշտոններ:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ՝ որդի և դուստր: Անկախ տիրապետած մասնագիտությունից ու կատարած աշխատանքից՝

նրա ուշադրության կենտրոնում միշտ սահման էր, այնտեղ կանգնած հայ զինվորը: Եվ խաղաղ, եվ պատերազմական իրավիճակներում այցելում էր դիրքեր, հանդիպում դիրքապահներին իր խորհուրդներով գոտեպնդում նրանց, աջակցում ինչով կարող էր: Նրա նախաձեռնությամբ և անձնական միջոցներով՝ Նախիջևանի, Սիսիանի և Քաջարանի պաշտպանական դիրքերին է տրամադրվել անհրաժեշտ տեխնիկա, տրակտոր, ձյուն մաքրող մեքենա, բժշկական պարագաներ, պատգարակներ, հեռադիտակներ և այլն:

Հայրենակներ գործունեության համար Արթուր Գրիգորյանը պարգևատրվել է «Հայրենիքի պաշտպան» մեդալով, «Հայաստանի երկրպագ» հուշամեդալով, «ԵՎՄ 20 տարի» հորեյանական մեդալով, շնորհակալագրերով և պատվոգրերով:

2020 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան, երբ ադրբեջանական կողմը Նախահարձակ էր արձակում, առաջիններից էր, ով մեկնեց ռազմաճակատ: Արդեն մարտական գործողությունների մասնակից էր միակ որդին՝ Կարենը, ով Ջրականի պաշտպաններից էր:

Ծանր մարտերից մեկի ժամանակ Արթուր Գրիգորյանը որդու և ընկերների կյանքը փրկելով՝ հերոսաբար զոհվում է:

Որդին հպարտությամբ է հիշում հոր հետ անցկացրած ռազմաճակատային օրերը:

Արթուր Գրիգորյանը սիրում էր կրկնել. «Աշխարհի որևէ հրաշք չէմ փոխի իմ հայրենի բնաշխարհի մի թիզ հող ու ջրի, անգամ փոքրիկ բարի հետ»: Ցավով, նրա շատ երագանքներ անկատար մնացին...

Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով: //



Միտր Առաքելյան. չխնայեց կյանքը հանուն հայրենիքի

Առաքելյան Միտր Սասունի, ծնվել է 2000 թ. օգոստոսի 18-ին՝ Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում: Միտրը մեծացել էր զինվորականի ընտանիքում: Հայրը՝ Սասուն Առաքելյանը, 20 տարի աշխատել է ռազմական ոստիկանությունում, զավակներին մեծացրել և դաստիարակել զինվորական կարգ ու կանոնով, վարք ու բարքով: Ավագ որդուն՝ Դավիթ էին կոչել, կրտսերին՝ Միտր՝ Սասուն տան քաջերի անուններով:

Միտրը 2019-ի հունվարի 16-ին զորակոչվել է հայոց բանակ, ծառայել Մարտունու 3-րդ պաշտպանականում: Կարճ ժամանակով կարողացել էր արժանանալ հրամանատարների հարգալից վերաբերմունքին:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց... Միտրը զանգահարում էր տուն, հորդորում իր համար չանհանգստանալ, ասում, որ ամեն ինչ լավ է լինելու:

Նա Մարտունու գնդի կազմում 15 օր մասնակցել է պատերազմին. դիմակայել են նենգ թշնամուն, սակայն հոկտեմբերի 11-ին հրաման են ստացել տեղափոխվել Հաղորդք: Ողջ գունդն ընկել էր շրջափակման մեջ, հրամանատարությանը տեղեկացրել են, որ այլևս չեն կարողանում թշնամուն դիմակայել... Դա եղել է վերջին տեղեկատվությունը Միտրի գտնվելու վայրի մասին: Հետո սպասում, հույս, աղոթք, հուսահատություն... ԴՆԹ նմուշառումից հետո հակառակակն զգացողություններ էին՝ Առաքելյաններն արդեն հողին էին հանձնել Միտրի հորեղբոր որդուն՝ Ար-

տակին: Արտակն ու Միտրը տարեկիցներ էին, հաճախել էին Նույն դպրոցը, Նույն մարզաձևն էին պարապում, Նույն օրն էին զորակոչվել բանակ, Նույն սենյակում էին ապրում: Ու մայրը դողում էր. «Մի՞թե Նույն կերպ պիտի ընդհատվեր նրանց կյանքը»:

Միտրի ու Արտակի համատեղ անցկացրած մանկության, պատանեկության ու երիտասարդության մասին անվերջանալի պատմություններ են պատմում, նրանց հետ մեծ հույսեր էին կապում, նրանց ապագան պատկերացնում էին միայն լուսավոր, բայց...

2021 թ. հունվարի 24-ին ԴՆԹ հետազոտությունը փաստեց՝ Միտրը զոհվել է, Միտրը գնացել է եղբոր հետևից, հերոսացել է...

2021 թ. հունվարի 26-ին Սիսիանի զինվորական պանթեոնում հարազատները վերջին հրաժեշտը տվեցին 20 տարեկան հայ զինվորին, ով զինվորական երգման համաձայն՝ չխնայեց կյանքը հանուն հայրենիքի: //



Սպարտակ Մնացականյան. զոհվեց պատերազմի ավարտից ժամեր առաջ

Սպարտակ Լևոնի Մնացականյան. ծնվել է 2000 թվականի նոյեմբերի 3-ին՝ Ազարակ քաղաքում: Սովորել է Ազարակի միջնակարգ դպրոցում: Հինվորականների ընտանիքում մեծացած տղան չէր երազում զինվորական դառնալ: Երազում էր դեսպան լինել Իրանում կամ Արաբական Միացյալ Եմիրություններում: Երազանքին հետևելով՝ դպրոցը գերազանց առաջադիմությամբ ավարտելուց հետո, ընդունվել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետ: Երբ պատրաստվում էր ընդունելության քննություններին, եղբոր՝ Հայկի խոսքով, հայոց պատմությունը նրա տարերքն էր դարձել:

«Երբ հայոց պատմության գրքերն էր կարդում, անընդհատ գալիս, ինձ ասում էր՝ Նայի, սե՛նք բան ենք ունեցել, կարողա, դու էլ սովորի: Ու տալիս էր, որ անսպասելի կարգավիճակ»,- պատմում է Հայկը:

«Սպարտակն ուներ իր աշխարհը, որի մասին ամենից շատ կիսվում էր ամենամոտ ընկերոջ՝ Նարեկի հետ, ով Նույնպես զոհվել է պատերազմում: Երբ միասին նստում էին, խոսում, ոչ ոք ոչինչ չէր հասկանում», - հիշում է զինվորի եղբայրը:

2019 թ. գորակազմվել է բանակ, ծառայել է Արցախի Հանրապետության Մատաղիսի զորամասում: Օրինակելի ծառայության համար արժանացել է «Բանակի գերազանցիկ» և «Քաջարի մարտիկ» մեդալների: Մոր ասելով՝ հրամանատարներն ասում էին. «Հվար մի բան, որ հարցնեմք, ու Սպարտակը չի մասնար թե՛ ծառայության հետ կապված, թե՛ զենքերի ու թե՛ իր գեների՝ հրետանու: Հորից էր ժառանգել հրետանու հանդեպ սերը. նա էլ է հրետանավոր»:

«Սպարտակը շատ գրագետ էր, հաշվարկներից լավ գուլիս էր հանում ու նաև լավ հիշողություն ուներ և իր համար առավել հեշտ էին հրետանու հետ գործ ունենալը, բոլոր նախնական հաշվարկներն իրականացնելը», - ասում է հայրը: Ծնողների հպարտությունն անհանգստության փոխվեց 2020 թ. սեպտեմբերի 27-ին, երբ Ադրբեջանը պատերազմ սկսեց. առաջին իսկ օրվանից եղել է մարտի դաշտում, մասնակցել՝ Թալիշի, Մատաղիսի, Շուշիի, Քարին տակի, Կարմիր Շուկայի, Մարտունիի թե՛ մարտերին:

Սպարտակը հավատում էր հաղթանա-

կին. «Եթե այս փոքր բանակով մենք կարողանում ենք պայքարել 4 պետության դեմ, ուրեմն մեզ հաղթել չի լինի...»:

Պատմական ֆիլմերի սիրահար հրետանավորը պատերազմի օրերին մոր հետ խոսելիս ասել է. «Մամ, ոնց որ Նայածս կիսունքում լինեմ, բայց էստեղ ամեն ինչ ավելի բարդա»:

Նրա վերջին մարտը նոյեմբերի 9-ին էր՝ Մարտունու շրջակայքում: Պատերազմի ավարտից ժամեր առաջ է զոհվել Սպարտակը՝ զոհվել է առանց իմանալու, որ մենք մեզ պարտված ենք կոչել:

Սպարտակի աճյունն ամփոփվել է Եռաբլուր զինվորական պանթեոնում նոյեմբերի 11-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով: //



Քրիստափոր Արթին. «Ես հայրենիքիս մեջ չեմ ապրիր, բայց հայրենիքը իմ մեջ կապրի»

Քրիստափոր Արթին, ծնվել է 1972 թ. հունվարի 16-ին, Լիբանանում: Նախնական կրթությունը ստացել է Բուրջ Ֆամուրի Սեն Կրեկուար վարժարանում: 1986 թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Տորոնտո՝ Կանադա, և ուսումը շարունակել Կանադայի բարձրագույն վարժարանում:

1991 թ. անդամակցել է ՀՀ Պաշտպանությանը: ՊԲ Շուշիի առանձին հրաձգային գումարտակի կազմում մասնակցել է Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականության համար մղված մարտական գործողություններին. 1993 թ. հունիսի 1-ից մինչև հոկտեմբերի 30-ը՝ Մարտակերտի, Ադրբայջանի և Կովսականի (Չանգեզանի) շրջաններում, 1994 թ. ապրիլի 1-ից մինչև մայիսի 12-ը՝ Ֆիզուլու և Մարտակերտի շրջաններում, հրադադարից հետո՝ մինչև 1995 թ. հունիսը՝ Մարտակերտի շրջանի Կարմիրավան-Ջրաբերդ-դաշտային կայան Մարտակերտ տեղամասի պաշտպանությանը:

2011-ի օգոստոսին Քրիստափոր Արթինը՝ կնոջ՝ Գայանեի և դուստր՝ Արագի հետ, վերջնականապես տեղափոխվել է Հայաստան՝ բնակություն հաստատել Կապան քաղաքում:

Սեպտեմբերի 27-ին, երբ Ադրբեջանը սանձազերծեց պատերազմ, նա Երևանում էր: Անդամագրվեց «Կամավորական շարժում» ՀՀ գումարտակի 2-րդ վաշտին, մի քանի օր մասնակցեց զինավարժություններին ու իր մարտական ընկերների հետ միանգամից մեկնեց առաջնագիծ:

Հոկտեմբերի 2-ին վաշտը մեկնել է Արցախ և անմիջապես ընդգրկվել Վարանկաթաղի (Լուպասագ) բարձունքի շրջանում ընթացող մարտական գործողություններին:

2020 թ. հոկտեմբերի 6-ին հերոսաբար զոհվել է Մարտակերտի շրջանի համար մղված մարտերի ժամանակ՝ կյանքի գնով պաշտպանելով Վարանկաթաղի (Լուպասագ) բարձունքը: Այդժամ հայրենիքը կորցրեց լավագույն հային, այն մարդուն, ով չէր ծնվել հայրենիքում, բայց հայրենիքը ծնվել էր իր մեջ:

Քրիստափոր Անդրանիկի Արթինն ԱՀ նախագահի կողմից հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով, ՀՀ նախագահի հրամանագրով՝ «Մարտական ծառայություն» մեդալով: //

ԷՏՈ ՊԱՏՐԱՍՏԵՑ ՄԱՐԻ ՆԱԿԱՍԱՐԴԱՆԸ



Խնձորենկի կարևոր խնդիրներից մեկը՝ ոռոգման ջրագծերը, վերակառուցվում են

Տանամյակներ անց լուծվում է Խնձորենկ բնակավայրի կարևոր խնդիրներից մեկը՝ ոռոգման ջրագծերը, վերակառուցվում են: Ծրագրի իրականացման արդյունքում բնակավայրում լուրջ խնդիրներ են լուծվելու, բակի որ տևամերձ այգիներից գատ վարելահողերն ու այգիներն են նաև ոռոգվելու: Գորիսի համայնքապետարանի և ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում իրականացվում են վերակառուցման աշխատանքներ:

Չանգեզուրի պղնձամուլիբդենայինը՝ ամենախոշոր հարկատու

2022-ի առաջին եռամսյակում Հայաստանի ամենախոշոր հարկատուն Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբի-

նատն է՝ վճարած ավելի քան 35,4 միլիարդ դրամի հարկերով: Անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընկերությունը գրեթե բառապատկել է վճարած հարկերը: Այդ

մասին տեղեկանում ենք Պետեկամուտների կոմիտեի հրապարակած՝ այս տարվա առաջին եռամսյակի 1000 խոշոր հարկատուների ցուցակից:

Գորիսում համայնքային ենթակայության 19 շենքի տանիքներին կտեղադրվեն արևային ֆոտովոլտային համակարգեր

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի աջակցությամբ Գորիս համայնքում կտեղադրվեն ֆոտովոլտային համակարգեր: Նախատեսվում է տեղադրել Գորիսի բոլոր ՆՈՒՅ-երի, Գորիսի Ա. Սաթյանի անվան երաժշտական դպրոցի, Մանկապատանեկան մարզադպրոցի, «Գորիս բարեկարգում» ՀՈԱԿ-ի, «Կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի, Վերիշենի, Խնձորենկի, Ներքին Խնձորենկի, Հարթաշենի, Բարձ-

րավանի, Շուռնուխի վարչական շենքերի, Խնձորենկի Ա. Սաթյանի անվան երաժշտական դպրոցի տանիքներին: Ծրագիրը ֆինանսավորվում է USAID-ի կողմից: Տեղադրվող կայանների միջոցով հնարավոր կլինի համայնքային բյուջեի ծախսերը կրճատել: Գորիսի համայնքապետարանի նիստերի դահլիճում հիմնադրամի ներկայացուցիչները խոսել են ծրագրի մասին, պատասխանել հետաքրքրող հարցերին:



Քննարկվել են համագործակցության ու մարզի զարգացման ծրագրերի հետ կապված հարցեր

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանն ընդունել է «Գեոպրոմայնինգ» ընկերությունների խմբի Նախագահ Ռոման Խոտրոյիչիևի ու ընկերության այլ ներկայացուցիչների: Հանդիպումը նախ ճանաչողական էր՝ պաշտոնյաները ծանոթացան միմյանց: Երկու կողմերն էլ շեշտեցին «Գեոպրոմայնինգի» մասնակցությամբ մարզում գործող երկու ձեռնարկությունների՝ «Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» և «Ազարակի պղնձամուլիբդենային

կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունների կարևորագույն դերը մարզի կյանքում: Այնուհետև քննարկվեցին մարզպետարանի ու հատկապես «ՉՊՄԿ» ՓԲԸ-ի միջև համագործակցության, գործընկերային հարաբերությունների, համատեղ համաձայնեցված ներդրումների ու զարգացման ծրագրերի հետ կապված հարցեր, որոնք առաջիկայում առավել մանրամասնորեն կներկայացվեն ու մասնագիտական աշխատանքի արդյունքում շոշափելի կդառնան:

Մարզպետն ու «Գեոպրոմայնինգի» ղեկավարը խոսեցին նաև երկուստեք հարաբերությունները նոր մակարդակում կայացնելու ճանապարհի մասին: Պարոն Խոտրոյիչը ներկայացրեց իր պատկերացումներն ու այն ծրագրերը, որ նախատեսում է ընկերությունը մարզային կյանքի տարբեր բնագավառներում կարճաժամկետ ու երկարաժամկետ կտրվածքով՝ կարևորելով համագործակցությունը ՀՀ կառավարության ու մարզպետարանի հետ:

Բնակարանամուտ՝ սահմանամերձ Որոտան բնակավայրում

Երբ ամուր են տան պատերը, ամուր է նաև հայրենիքի սահմանը: Սահմանամերձ Որոտանում 6 ընտանիք բնակարանամուտ է տունել: Սահմանի սպորտների համար բարեկարգ տուն ունենալը ոչ միայն հարմարավետության խնդիր է, այլև նաև ռազմավարական խնդիր: Ամրացնել սահմանը պահող գյուղերը՝ սա է նաև օրվա հրամայակարգը: Գորիս համայնքի միջոցներով Որոտանում համայնքային Նշանակության շենքը հիմնովին նորոգվել է: Բնակարանամուտ տունող 6 ընտանիքից 3-ը Արցախից տեղահանված են: Այդ առիթով Որոտան էին այցելել

բազմաթիվ հյուրեր՝ բնակարանամուտի ուրախությունն ընտանիքների հետ կիսելու համար: Ուրախալի է, որ որոտանցիներն ամուր պահում են բնակավայրը, այն վերաբնակեցվում է, նոր ընտանիքներ են տեղափոխվում: Առաջիկայում նաև ոռոգման ջրագծերի կառուցման ծրագիրը կմեկնարկի: 6 ընտանիքները վաղուց էին սպասում, նրանց համար անհնարին թվացող խնդիրներն այսօր լուծվել են: Համայնքի խնդիրն է, կառուցել, շենացնել՝ բնակիչների համար ստեղծելով պայմաններ:

ԳՐԻԿՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«Հրաձգություն» մարզաձևի մրցման մարզային փուլը

Ապրիլի 12-ին Կապանի Դ.Յամբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի դահլիճում կայացավ ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև 2022թ. կազմակերպվող «Սպարտակիադա» մարզական միջոցառման «Հրաձգություն» մարզաձևի մրցման մարզային փուլը: Մասնակցում էին Կապան, Գորիս, Մեղրի, Քաջարան, Գորայք համայնքներում հաղթող ճանաչված թիմերը:



Լավագույն արդյունքը գրանցեց Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի թիմը, որն էլ ապրիլի 19-ին Երևանում կայանալիք մրցման եզրափակիչ փուլում Սյունիքի մարզը ներկայացնելու իրավունք նվաճեց:

Երկրորդ տեղում՝ Քաջարանի, երրորդում՝ Մեղրու թիմերն էին:

100 հարց. հաստատվել են նախադպրոցական հաստատություններում մանկավարժների մրցույթի հարցաշարերը

Հարցաշարերում ընդգրկված 100 հարցերը վերաբերում են նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենսդրությանը, ուսումնամեթոդական և մանկավարժաօգնականական իմացություններին և մասնագիտական հմտություններին: Հարցաշարի հաստատման համար հիմք է հանդիսացել ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի փետր-

վարի 17-ի N 08-Ն հրամանով հաստատված «Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման) կարգով» սահմանված մանկավարժական աշխատողների մրցույթային ընտրության պահանջը:

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
29.03.2022

ԿԳՄՍՆ-ն տարկետման մասին նախագիծ է մշակել, ՊՆ-ն առաջարկում է քննարկել դպրոցը 11-ամյա դարձնելու հարցը

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն առաջարկում է ընդլայնել կրթության նպատակով պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման հնարավորությունները, իսկ գորակոչի տարիքային շեմը 27-ից դարձնել 28:



Հի ենթակա լինելու սահմանային տարիքը նրանց կողմից տարկետում ստանալու հանգամանքի հետ փոխկապակցումն անհամապատասխանության մեջ է մտնում ՀՀ Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածների հետ: Հիշատակված հոդվածները վերաբերում են օրենքի առջև ընդհանուր հավասարությանը և խտրականության արգելքին:

«Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումների մասին նախագծով առաջարկվում է տարկետում տալ նաև պետության համար առաջնահերթ կարևորություն ունեցող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորելու դեպքում: Այդ մասնագիտությունների ու բուհերի ցանկը պետք է սահմանվի ավելի ուշ:

Գործող կարգավորումներով՝ պարտադիր զինծառայությունից տարկետում տրամադրվում է այն դեպքում, երբ քաղաքացին օլիմպիականների մրցանակակիր է, ընդունվել է աշխարհի լավագույն 50 բուհերից որևէ մեկը կամ կրթության և գիտության բնագավառներում ունի նշանակալից նվաճումներ:

Հովհաննես Գևորգյան - Այսինքն՝ դա շարունակական պահանջ է լինելու բոլոր կրթական ծրագրերի համար, և լավագույն որակներով մեր երիտասարդ ուսանողները առողջ մրցակցության տիրույթում կհայտնվեն, ինչը հնարավորություն կտա նաև մեզ հետագայում ունենալ գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվելու մասնագիտացված կադրեր:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ բնագիտական ուղղվածության մասնագիտությունները այնքան էլ գրավիչ չեն երիտասարդների համար, և նախագծի հեղինակներն ակնկալում են, որ տարկետման իրավունքով սովորելու հնարավորությունը ավելի պահանջված կդարձնի դրանք:

Պաշտպանության նախարարությունը գորակոչի սահմանային տարիքի բարձրացումը նպատակահարմար չի համարում:

ՊՆ պատասխան - Չորակոչի սահմանային տարիքը սահմանված է ՀՀ արական սեռի բոլոր քաղաքացիների համար, և կրթության բոլոր աստիճաններով կրթական իրավունքն իրացնող քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության գորակոչ-

խտրականության արգելքին: Կրթական գերատեսչությունը, միևնույն ժամանակ, նշում է, որ գորակոչի տարիքային շեմը 27 սահմանելու ժամանակ դպրոցում կրթությունը եղել է 10-ամյա, և քաղաքացիները, 17 տարեկանում ավարտելով դպրոցը, հնարավորություն են ունեցել մինչև 27 տարեկան ավարտել կրթությունը՝ բոլոր աստիճաններով: Սակայն 12-ամյա կրթության անցնելուց հետո քաղաքացիները համալսարան են ընդունվում 18 տարեկանում և հնարավորություն չեն ունենում ավարտել ասպիրանտական կրթությունը: Պաշտպանական գերատեսչությունն ի պատասխան առաջարկում է քննարկել հանրակրթական ծրագիրը 11-ամյա դարձնելու հարցը:

Մնացածը համարում է քննարկելի՝ առաջարկելով պետության համար կարևոր մասնագիտություններով սովորողների համար տարկետման իրավունքը դիտարկել թե՛ պաշտպանության նախարարության կարիքների, թե՛ կրթության և գիտության ոլորտներում նշանակալի նվաճումների տեսանկյունից:

Այս տարի դիմորդները բանավոր քննություններ չեն հանձնելու

Նախկինում շրջանավարտները բուհ ընդունվելիս հանձնում էին մեկ կամ երեք քննություն, այս տարվանից դիմորդները բուհ կարող են ընդունվել միայն երկու քննության արդյունքում: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին բուհերի ընդունելության միասնական և ներբուհական քննությունների հայտագրման և քննությունների կազմակերպման գործընթացը՝ ըստ փուլերի և հերթական քայլերի թեմայով ասուլիսի ընթացքում հայտնեց Գևորգյան և թեստավորման կենտրոնի փոխտնօրեն Կարո Նասիբյանը:

«Միասնական քննությունների թիվը սահմանվել է երկուսը: Եթե նախկինում շրջանավարտները բուհ ընդունվելիս հանձնում էին մեկ կամ երեք քննություն, սպա այս տարվանից դիմորդները բուհ կարող են ընդունվել միայն երկու քննության արդյունքում», - նշեց նա: Նասիբյանը նշեց, որ կենտրոնացված քննություններից հրաժարվելուց բացի հրաժարվել են նաև բանավոր քննություններից: «Նախկինում դիմորդները հանձնում էին հայոց լեզվի և օտար լեզուների բանավոր քննություններ: Բանավոր քննություններ այլևս չեն լինելու: Գործարկվել են նաև լրագրություն մասնագիտության ստեղծագործական աշխատանք և բանավոր խոսքի հմտություններ առարկաների քննություններից», - ընդգծեց նա:

19.04.2022

Պարտություն սեփական հարկի տակ

Հայաստանի ֆուտբոլի Պրեմիեր լիգային զուգընթաց տեղի է ունենում առաջին խմբի առաջնությունը, որտեղ առաջին երկու տեղերը 54-ական միավորով զբաղեցնում են Գյումրիի «Շիրակ»-ը և «Լեռնային Արցախ»-ը: Կապանի «Գանձասար»-ը 31 միավորով երրորդ հորիզոնականում է: Թիմերը պայքարում են բարձրագույն խմբի ուղեգրի համար, բայց արդեն, ինչպես տեղեկացնում է «Ֆուտբոլ պլուս» պարբերականը, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան «Շիրակ»-ին արտոնագիր է շնորհել, որ իրավունք է վերապահում Գյումրիի թիմին մյուս մրցաշրջանում հանդես գալու Հայաստանի Պրեմիեր լիգայի առաջնությունում: Այնպես որ բաղձալի ուղեգրի համար Կապանի «Գանձասար»-ը պետք է պայքարի մյուս մրցաշրջանում:

Այնուամենայնիվ, առաջին խմբի առաջնությունը շարունակվում է, և ապրիլի 23-ին «Գանձասար»-ը ընդունել էր «ԲԿՄԱ-2»-ին: 28-րդ ռոպեին հյուրերի գոհներից մեկն ավարտվեց «Գանձասար»-ի դարպասի գրավումով: Երկրորդ խաղակեսում հյուրերը ևս երկու անգամ գրավեցին «Գանձասար»-ի դարպասը, ինչին դաշտի տերերը պատասխանեցին մեկ գոլով:

Հաջորդ խաղը «Գանձասար»-ը կանցկացնի ապրիլի 30-ին Երևանի «Ուրարտու-2» թիմի հետ:

ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԿՈՐԵԼ Է Կորել է «Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի 2019թ. շրջանավարտ Աշոտ Լվերի Փարսյանի դիպլոմը՝ № 039108, գրանցման № 620: Համարել անվավեր:

Սյունյաց երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐԱՌՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
☎ (+374 91) 45 90 47
☎ (+374 77) 45 90 47
✉ syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Երկրորդ ներկայացնել մեքենագիր վիճակում:
«ԳՐՎԱԾԴ» - ԾԱՆՈՒՑՈՒՄ բաժնում
տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկիր» պարտադիր է: Թե՛ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրականը՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 26.04.2022թ.: